

ՊԱՏՐԻԱՐԲ ՍՐԲԱԶԱՆ ՀՕՐ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ՀԻՄՆԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻՆ

Պատրիարք Սրբազան Հօր միամսեայ ուղեորութիւնը Միացեալ Նահանգներ 2002 Մայիս 9 – Յունիս 11 անցաւ քարեյաջող եւ արդիւնաւէտ: Վերջին անգամուայ իր տուած այցելութենէն անցած էր արդէն երեք տարի:

Հակառակ որ Պատրիարք Սրբազան Հայրը Նիւ Եորք կ'այցելէր բժշկական եւ առողջական դրդապատճառներով, սակայն երկար բացակայութենէ մը ետք հոն պիտի գտնուէր որպէս նախկին Առաջնորդ Սրբազանը, կամ ինչպէս տարեցները կը յիշէին՝ «Հայր Թորգոմը»:

Պատրիարք Սրբազան Հայրը միամսեայ կեցութեան շրջանին առիթ ունեցաւ մօտիկէն աղընչուելու, անգամ մը եւս հաղորակցուելու Թեմի մէջ առկայ յաջողութիւններուն ու խնդիրներուն, միեւնոյն ատեն ծանօթացնելով Ս. Երկրին մէջ տիրող փաղափական ծանր կացութիւնը:

Սրբազան Հայրը մասնակցեցաւ համայնֆային, ծխական եւ անհատական ձեռնարկներուն, ունեցաւ պաշտօնական եւ ոչ պաշտօնական հանդիպումներ, միջեկեղեցական եւ միջկրօնական ձեռնարկներ, իւրաքանչիւր Կիրակի եւ յարմար առիթով նախագահեց եկեղեցական արարողութիւններուն: Հիւրընկալուեցաւ ընտանեկան յարկերէ ներս:

ԺԱՍՆՈՒՄ

Հինգշաբթի, 9 Մայիս 2002ին, Նիւուրք (Նիւ Ճորճի) միջազգային օդակայանին մէջ Պատրիարք Սրբազան Հօր դիմաւորելու եկած էին թեմակալ Առաջնորդ Ս. Խաթակ Արք. Պարսամեան, Ս. Անանիա Արք. Արապանեան, Ս. Վազգէն Ծ. Վրդ. Գարայեան, Ս. Բարգէն Ծ. Վրդ. Անուշեան եւ Երուսաղէմի Բարեկամներու Յանձնախումբի անդամներ Տիար Գեղամ Զօյաֆեան եւ Տիար Գրիգոր Մանուէլեան:

Պանդոկի կարգադրութենէն ետք, Խաթակ Սրբազան Հօր առաջնորդութեամբ, Պատրիարք Սրբազան Հայրը առաջին իսկ առիթով այցելեց Առաջնորդարան, ուր հին ու նոր բարեկամներ իրեն կը սպասէին: Ան եղաւ Առաջնորդարանի գրեթէ բոլոր բաժանմունքներէն ներս, ծանօթանալով նաեւ նոր պաշտօնէութեան հետ:

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՒ ԾԽԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ

Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան Թեմի Առաջնորդ Ս. Խաթակ Արք. Պարսամեանի կարգադրութեամբ, Պատրիարք Սրբազան Հայրը ընկերակցութեամբ գաւազանակիր Ս. Իսահակ Արք Միմասեանի, զանազան առիթներով ներկայ գտնուեցաւ Թեմի տարբեր ծուխերէն ներս: Դրեթէ բոլոր ծխական եկեղեցիներուն մէջ Պատրիարք Սրբազան Հայրը «Հրաշափառ»ի արարողութեամբ ընդունուեցաւ: Իր տուած հովուական այցելութեան ընթացքին, յիշեցուց թէ որքան դժուար է հայ մնալ եւ հայ ապրիլ, այնքան ալ փաղցր եւ պարտաւորեցուցիչ է հայ հոգիով սերունդ մը դաստիարակել-ջամբել: Պատգամեց եկեղեցւոյ մէջ եւ եկեղեցւոյ հետ ըլլալ, քանի որ ժողովուրդն ինքն է ԵԿԵՂԵՑԻՆ:

Հայաստանի անկախացումէն մինչեւ այսօր, սփիւռահայութեանը օգնութեան դիմում չէ կատարած Երուսաղէմի Հայոց Վանքը: Այսօր լուրջ հարցերու եւ խնդիրներու առաջ է կանգնած: Ս. Երկրին եւ մասնաւորաբար Բեթղեհէմի Ս. Ծննդեան Տաճարի մէջ տիրող փաղափական անբարենպաստ պայմաններով մտահոգ, կոչ ըրաւ ամերիկահայութեան ամէն միջոցներով օժանդակել Ս. Յակոբեանց Զինուորեալ Միաբանութեանն ու Վանքին:

Պատրիարք Սրբազան Հայրը սիրայօժար կերպով մասնակցեցաւ բոլոր ծխական խորհուրդներու նախաձեռնած սիրոյ հաշերուն եւ հաւաքութիւններուն: Ան մօտիկէն շփուեցաւ ժողովուրդին հետ, կիսեց անոր ուրախութիւնն ու ցաւը՝ քաժմնելով իր օրհնութիւնները: Առաջնորդ Սրբազան Հօր հետ միասին ֆաջայերեցին վերականգնել ուխտագնացութիւնը դէպի Ս. Երուսաղէմ, դէպի արմատները հայ քրիստոնեայ հաւատքի, դէպի Աստուած եւ Աստուածայայտնութիւն:

Գոհունակութեամբ մատնանշեց որ Հայաստանեայց եկեղեցին իր առաքելութեան ճիշդ ուղիի վրայ է, մասնաւորապէս Ամերիկայի Թեմերէն ներս:

Հերթականութեամբ ստորեւ պիտի նշեմ այն ծուխերն ու եկեղեցիները, որոնք եղան Պատրիարք Սրբազան Հօր հանգրուանները:

– Կիրակի, 12 Մայիս, *Թեմէֆայ Նիւ Ճորճի Ս. Թովմաս եկեղեցի*: Ս. Պատարագը մատուց հոգեւոր հովիւ Ս. Բարգէն Ծ. Վրդ. Անուշեան, որուն աւարտին, եկեղեցւոյ սրահին մէջ տեղի ունեցած հաշանդանէն յետոյ, Պատրիարք Սրբազանը տեսակցութիւն ունեցաւ վերջին տարիներուն Երուսաղէմ այցելած երիտասարդներու խումբին հետ:

- Շաբաթ, 18 Մայիս, *Փրավիտենա Ռոտ Այլընտի Ս. Սահակ և Ս. Մեսրոպ եկեղեցի*: Ներկայ գտնուեցաւ «Կալա» համերգին, ի յիշատակ ծովի նուիրեալ անդամ էտուըրտ Սրկ. Նորիկեանի:

Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Տ. Շնորհի Ծ. Վրդ. Գասպարեան նշեց, թէ Պատրիարք Սրբազան Հօր մասնակցութիւնը համերգին յատկանշական է, քանի որ հանգուցեալը իրեն ձեռնասունն է եղած:

Փրավիտենա Ռոտ Այլընտ և Ուստըր Մասսաչուսէց եկեղեցիներու երգչախումբերը, ինչպէս նաեւ թէմոր Եղիշէ Մանուչարեան և մեցցօ-սոպրանօ Վիկտորիա Աւետիսեան հանդէս եկան ղեկավարութեամբ Մաէստրօ Կոնստանտին Պետրոսեանի:

Համերգի աւարտին Ամենայն Հայոց Հայրապետի «Կաթողիկոսական Կոնդակ»ը կարգացուցաւ և տրուեցաւ հանգուցեալի այրիին՝ Տիկ. Տօլորիս Նորիկեանին:

- Կիրակի, 19 Մայիս, *Ուստըր Մասսաչուսէցի Ս. Փրկիչ եկեղեցի*: Պատարագի սկզբին, Հոգեւոր հովիւ Տ. Աւետ Քհնյ. Թերզեանի առաջնորդութեամբ Պատրիարք Սրբազան Հայրը հանդիպում ունեցաւ կիրակնօրեայ վարժարանի հայորդիներու հետ, որոնք կանուխ եկած էին եկեղեցի: Ս. Պատարագը մատուց թեմակալ Առաջնորդ Սրբազանը, որ տուաւ օրումն քարոզը Անգլիերէն լեզուով: Պատարագէն անմիջապէս ետք, Առաջնորդ Սրբազանը օրհնեց Տէր և Տիկին Ասպետ և Մարգրիտ Զաքարեաններու կողմէ եկեղեցւոյն նուիրուած երգեհոնը: Պատրիարք Սրբազանը եկեղեցւոյ մէջ և հաշտեղանին խօսեցաւ Նրուսաղէմի մասին: Իսկ երեկոյին, Պատրիարք Սրբազան Հօր հետ, քարերարներու նախաձեռնութեամբ ընթրիք տեղի ունեցաւ:

- Զորեքշաբթի, 22 Մայիս, *Ուայթ Բլէյնզի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցի, Նիւ Եորք*: Հոգեւոր Հովիւ Տ. Գարեգին Ա. Քհնյ. Գասպարեան ներկայացնելով Պատրիարք Սրբազան Հայրը, հրաւիրեց որ տայ իր պատգամը Հայերէն և Անգլիերէն լեզուներով: Հոգեհանգստեան Պաշտօն կատարուեցաւ Սարգարապատի հերոսամարտին մէջ զոհուածներուն համար: Պատրիարք Սրբազան Հօր գալուստով խանդավառ՝ հաշի առնելու օրախ մթնոլորտ մը ստեղծուեցաւ երգի խմբական մասնակցութեամբ:

- Ուրբաթ, 24 Մայիս, *Պէյսայտի Ս. Նահատակաց եկեղեցի, Նիւ Եորք*: Հոգեւոր հովիւ Տ. Վահան Վրդ. Յովհաննէսեան ներկայացուց Պատրիարք Սրբազան Հայրը և հրաւիրեց որ տայ իր պատգամը: Եկեղեցւոյ կից սրահին մէջ տեղի ունեցած ընթրիքին, հաւատաւոր ժողովուրդը իր մտահոգութիւնները յայտնեց Բեքդեհէմի ու տիրող կացութեան մասին:

- Նոյն յետ միջօրէին, Պատրիարք Սրբազան այցելած էր Ֆլըշինկի Հայ Տարեցներու Տան քնակիչներուն, և Տէր և Տիկին Գրիգոր Մանուկեանի քնակարանը, օրհնելով Հայաստանէն որդեգրուած իրենց երկու մանկիկները:

(Առանձնապէս պիտի անդրադառնամ Յունիս 1, 4, 9 թուականներու այցելութեանց, *Ուիմպուտի Ս. Սահակ և Ս. Մեսրոպ եկեղեցի*, Փէնսիլվէնիա, Ս. Աստուածածին եկեղեցի, Ուաշինկթըն Տի. Սի., Ս. Վարդան Մայր Տաճար, Նիւ Եորք: Հանդիսաւոր Ս. Պատարագ և Հոգեհանգստեան Պաշտօն՝ երջանկայիշատակ Տ. Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի վախճանման երրորդ տարելիցին առիթով:)

- Հիացումով պէտք է անելացնել, թէ մեծաթիւ էր ներկայութիւնը այն հաւատաւոր քրիստոնեայ հայերու, որոնք կը մասնակցէին Ս. Պատարագի խորհուրդին՝ հաղորդուելով մեր Փրկչի Ս. Մարմինով և Ս. Արեամբ:

ՀԱՆՐԱՅԻՆ ԵՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՁԵՆՆԱՐԿՆԵՐ

- ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ Ի ՊԱՏԻՒ Հ.Բ.Ը.Մ.-Ի ՆԱԽԱԳԱՀԻՆ

Ուրբաթ, 10 Մայիս, երեկոյեան ժամը 7:30ին, Առաջնորդարանի Հայկ և Ալիս Գալուֆ-Նեան հանդիսարահին մէջ տեղի ունեցաւ ընդունելութիւն ի պատիւ Հ.Բ.Ը. Միութեան նոր ընտրի նախագահ Տիար Պերն Սեդրակեանի, նախաձեռնութեամբ Հայց. Եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան Թեմի Առաջնորդարանի և Թեմակալ Առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ Արք. Պարսամեանի:

Աւելի քան 200 ազգայիններու ծափողիւններով, սրահի մուտքին դիմաւորուեցան Թոր-Աւելի Պատրիարք Սրբազան Հայրը, օրումն յորելիար Տիար Պերն Սեդրակեանը, Տ. Խաժակ Գոմ Պատրիարք Սրբազան Հայրը, Արապահեանը և Տ. Վիգէն Եպ. Այգազեանը: Ներկա-Արք. Պարսամեանը, Տ. Ամանիա Արք. Արապահեանը և Տ. Վիգէն Եպ. Այգազեանը: Ներկայութեան ներումն մէջ նշմարելի էին մեծ թիւով հոգեւորականներ, Հայաստանի Հանրապետութեան ՄԱԿ-ի մօտ լիազօր և մնայուն դեսպան Տոքթ. Մովսէս Արէլեան, ծանօթ ազգայիններ և ազգային-մշակութային կազմակերպութիւններու ներկայացուցիչներ: Հանդիսութեան քաջամը կատարեց թեմակալ Առաջնորդը, որ նախ ուրախութեամբ ողջունեց ներկայութիւնը Պատրիարք Սրբազան Հօր և ապա անդրադարձաւ օրումն մեծարեալի կեանքին ու գործունէութեանը՝ յիշատակելով նաեւ Հ.Բ.Ը.Մ.-ի նախկին նախագահները:

Տիար Պերն Սեդրակեան իր խօսքին մէջ նախ շնորհակալութիւն յայտնեց Առաջնորդ Սրբազան Հօր և Թեմական խորհուրդին, ապա՝ ողջունեց Պատրիարք Սրբազան Հայրը,

հոգեւորականները, Տոբ, Մովսէս Աբէլեանը եւ ներկաները: Ան ըսաւ. «Ամենապատիւ Պատրիարք Հայր, ուրախ եղայ երբ մեր Սրբազան Հայրը տեղեկացուց թէ Ձեր բարձր ներկայութեամբ պիտի պատուէ այս հաւաքոյթը: Մեզի համար Ձեր ներկայութիւնը յատկանշական է: ... Բոլոր հայութեան նման մենք ալ մտահոգ ենք Սուրբ Երկրի ներկայ կացութեամբ: Երբ վերջերս Ձեզի հետ հեռաձայնով կը խօսէինք՝ ուրախ եղայ իմանալով թէ Երուսաղէմի հայութիւնը եւ մեր հաստատութիւնները յարաքերաքար ապահով էին: ... Ձեզի կը վստահեցնեմ թէ մենք, համայն հայութեան հետ, թիկունք կը կանգնենք պաշտպանելու Պատրիարքարանիդ շահերն ու իրաւունքները»:

Օրհնութեան խօսքով հանրութեան ներկայացաւ Պատրիարք Սրբազան Հայրը. «Շնորհակալութիւն կը պարտիմ Առաջնորդ Խաժակ Սրբազան Հօր, ինձի համար մէկ կողմէ անակնկալ եւ միւս կողմէ շատ հաճելի հանդիպումին համար: Անակնկալ՝ որովհետեւ ես եկայ երկու պատճառներով: Մէկը այն որ ֆիզիքական առողջական պատճառներ ունիմ բժշկ. բարեկամներու խորհուրդին եւ խնամքին դիմելու: Բայց նաեւ կարիքը՝ խօսելու Երուսաղէմի կացութեան մասին, այնպէս ինչպէս ան է ներկայ տագնապալի կացութեան մէջ: Սակայն, նոյն ժամանակ հաճելի այս պատեհութեան առիթով կարեւոր կը նկատեմ այն իրողութիւնը, որ Հ.Բ.Ը. Միութիւնը ունեցած է իր նորընտիր նախագահը, յանձին Տիար Պերն Սեդրակեանի: Ինձի համար, Պր. Սեդրակեան խորհրդանիշ է տեսիլով գոտեպիկնք երիտասարդութեան: Ան ծանր պատասխանատուութիւններ կը ստանձնէ իրրեւ ներկայացուցիչ կորովի եւ գիտակից երիտասարդութեան:»

Պատրիարք Սրբազան Հայրը հանգամանօրէն անդրադարձաւ Միութեան պատմական, կազմակերպչական, ազգային ու նուիրական ծաւալուն գործունէութեանը՝ յիշատակելով նաեւ անոր երախտաշատ նախագահներ՝ ողբացեալ Պրն. Ալէք Մանուկեանը եւ իր դուստրը Տիկին Լուիզ Սիմոն Մանուկեանը:

Օրուան հանդիսութեան յայտագրի գործադրութիւնը իր աւարտին հասաւ Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Գարեգին Բ-ի «Հայրապետական օրհնութեան եւ գնահատանաց» գիրի ընթերցումով, որ կատարեց Տ. Վիգէն Եպ. Այվազեան:

Ապա, հիւրասիրութիւն տեղի ունեցաւ, որուն ընթացքին ներկաները ստացան Պատրիարք Սրբազան Հօր օրհնութիւնը եւ շնորհաւորեցին օրուան մեծարեալը:

- Երկուշաբթի, 13 Մայիսի երեկոյեան, Պատրիարք Սրբազան եւ Առաջնորդ Խաժակ Աբ. Պարսամեան ընթրիքի հիւր եղան Հ.Բ.Ը. Միութեան նորընտիր Նախագահ Տիար Պերն Սեդրակեանի, Նիւ Եոթ Կրէնտ Սէնթրլ Սթրիթի բարձրաբերձ շէնքին մէջ, ուր հրաւիրուած էին երկուստեան ներկայացուցիչներ ազգային կազմակերպութեանց: Խորհրդակցութեան նիւթն էր Հայ Երուսաղէմ Սուրբ Երկրի ներկայ կացութեան մէջ:

- «ՇՈՒՇԻ» ՊԱՐԱՆՈՒՄԲԻ ԵԼՈՅԹԸ

Շաբաթ, 11 Մայիս, Առաջնորդարանի Հայկ եւ Ալիս Գալուսեան հանդիսասրահին մէջ, Մայրերու Օրուան առիթով տեղի ունեցաւ «Շուշի» պարախումբի ելոյթը:

Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Թեմակալ Առաջնորդի եւ Եկեղեցական դասուն, ներկայ գտնուեցաւ հանրային մեծ քննոյթ կողմ այս երեկոյթին, որուն վառ ապացոյցն էր տակաւին իննը տարիներ առաջ Առաջնորդարանի հովանաւորութեան տակ կազմաւորուած հայ աղջկանց պարախումբին իւրօրինակ ելոյթը, ղեկավարութեամբ Սեդա Փասալեանի:

- ԱՅՅ ԳԵՊԻ Ս. ՆԵՐՍԷՍ ԸՆԾԱՅԱՐԱՆ

Չորեքշաբթի, 22 Մայիս, կէսօրէ ետք Պատրիարք Սրբազան Հայրը ընկերակցութեամբ Առաջնորդ Սրբազանին եւ գաւազանակրին, այցելեց Նիւ Բոշէլին մէջ նախկին Առաջնորդ Տ. Տիրան Աբ. Ներսիսեանի ջանքերով հաստատուած Ս. Ներսէս Ընծայարանը:

Ընծայարանի Տնօնչ՝ Տ. Դանիէլ Վրդ. Ֆինտիկեանի առաջնորդութեամբ հիւրերը ծանօթացան ուսումնական, կրթական եւ շինարարական ընդհանուր ծրագիրներուն, յիշատակելով անոր հիմնադրման 40 ամեակի առթիւ կատարուած աշխատանքները:

Իսկ Ընծայարանի դասախօս եւ միւսնոյն ժամանակ Գրադարանի պատասխանատու Տոբ. Արքաիմ Տերեան, բացատրեց կառուցուելիք գրադարանի անհրաժեշտութեան եւ այնտեղ պահուող հմարտի գիրքերու եւ հաւաքածոներու մասին:

Երեկոյեան ժամերգութիւն տեղի ունեցաւ Ընծայարանի մատուոյն մէջ: Ապա, հիւրասիրութեան ընթացքին մտերմիկ խօսակցութիւն ընծայարանի ապագայ գործունէութեան մասին:

- ՀԻՐԱՍԻՐՈՒԹԻՒՆ Ի ՊԱՏԻ ՀԱՅ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐՈՒ

Ուրբաթ երեկոյեան, 7 Յունիս, ՄԱԿ-ի Հայկական Դեսպանատան մէջ տեղի ունեցաւ հիւրասիրութիւն՝ ֆաշիստներու համար Սփիւտը, Հայ գիտնականներուն հետ աւելիով աջակցելու: Այդ նպատակաւ Ամերիկայի Արեւելեան Թեմի հովանաւորութեամբ հաստատուած

«Հայկական Ազգային Գիտութեան և Կրթութեան Հիմնադրամ»-ին (ANSEF) կազմակերպութեամբ հրաւիրուած էին բազմաթիւ հիւրեր: Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Տ. Խաժակ Արք. Պարսամբանի, Տ. Վիգէն Եպս. Այգազեանի և Տ. Իսահակ Արք. Մինասեանի ներկայ գտնուեցաւ հաւաքոյթին: Հիւրասիրութեան ընթացքին հանդիսավար Տիկին Անահիտ Գազանեան Լոնկոպարդօ շնորհակալութիւն յայտնեց Պատրիարք Սրբազան Հօր և ներկաներուն իրենց մասնակցութեան համար: Իրենց քաջալերանքը յայտնեցին ՄԱԿ-ի մօտ ՀՀ մնայուն և լիազօր Դեսպան Տոքթ. Մովսէս Աբելեան, ՀԱԳԿՀ-ի ատենապետ Տիար Դաւիթ Նանարեան, Carnegie Corporation-ի նախագահ Տիար Վարդան Գրիգորեան, Առաջնորդ Սրբազան Հայրը, և բոլոր իսկաւ Յովսէփեան:

- ԽՐԻՍՏԵԱՆ ԼԻՍԷ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԵՍ

Շաբաթ կէսօրէ ետք, 8 Յունիս, Նիւ Եորքի Ս. Վարդան Մայր Տաճարի մէջ տեղի ունեցաւ խորհրդաժողով Լիսէ Վարժարանի Շրջանաւարտից շնորհահանդէսը: Վկայականներու յանձնման արարողութիւնը գլխաւորող Պատրիարք և Առաջնորդ Սրբազան Հայրերը իրենց շնորհաւորանքները մաղթեցին շրջանաւարտներուն, և մանաւանդ Առաջնորդարանի Հայ Դպրոցներու Կեդրոնի վարիչ Օր. Սիլվա Տէր Ստեփանեանին: Այնուհետեւ, Պատրիարք Սրբազան Հայրը ընդունելով հրաւերը, մասնակցեցաւ ի պատիւ շրջանաւարտներու Պապ պանդոկին մէջ տրուած ընթրիքին:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԵՒ ՈՉ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

Ինչպէս վերը յիշեցինք, Պատրիարք Սրբազան Հօր ներկայութիւնը կարեւորուեցաւ իր ունեցած հանդիպումներով՝ ըլլան անոնք հաւաքական կամ անհատական, բարեկամական կամ պաշտօնական: Հիմնական ժամադրավայրն ու աշխատասենեակը հանդիսացաւ Ս. Վարդան Մայր Տաճարի համալիրը և Առաջնորդարանի դահլիճը: Առաջնորդ Սրբազան Հայրը իր սիրայօժար մասնակցութիւնը բերաւ նման հանդիպումներու:

- ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԼԵԱՆ ԹԵՄԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆՆԵՐՈՒՆ ՀԵՏ

Երեքշաբթի, 14 Մայիս, յետ միջօրէի ժամը 12:30-ին, Ս. Վարդան Մայր Տաճարին մէջ տեղի ունեցաւ Հրաշափառի արարողութիւն Պատրիարք Սրբազան Հօր գալստեան առիթով: Արարողութենէն ետք, Թեմի հոգեւորականաց զասի եկեղեցականները և սարկաւագները բուռով 30, խմբակար քաջուցան Տաճարին մուտքին:

Թեմակալ Առաջնորդ Տ. Խաժակ Արք. Պարսամբանի հիւրընկալութեամբ, համալիրին մէջ տեղի ունեցաւ ճաշ-հանդիպում: Առաջնորդ Սրբազան Հայրը բարի գալուստ մաղթեց Պատրիարք Սրբազան Հօր: Նաեւ Սիւնեաց Թեմի Առաջնորդ Տ. Աբրահամ Եպս. Մկրտչեանին, Պատրիարք Սրբազան Հօր: Նաեւ Սիւնեաց Թեմի հոգեւորականաց զասի եկեղեցականները և սարկաւագները բուռով 30, խմբակար քաջուցան Տաճարին մուտքին:

Թեմակալ Առաջնորդ Տ. Խաժակ Արք. Պարսամբանի հիւրընկալութեամբ, համալիրին մէջ տեղի ունեցաւ ճաշ-հանդիպում: Առաջնորդ Սրբազան Հայրը բարի գալուստ մաղթեց Պատրիարք Սրբազան Հօր: Նաեւ Սիւնեաց Թեմի Առաջնորդ Տ. Աբրահամ Եպս. Մկրտչեանին, Պատրիարք Սրբազան Հօր: Նաեւ Սիւնեաց Թեմի հոգեւորականաց զասի եկեղեցականները և սարկաւագները բուռով 30, խմբակար քաջուցան Տաճարին մուտքին:

Պատրիարք Սրբազան Հայրը խօսեցաւ երուսաղէմի Ս. Յակոբեանց Վանքի, Ժողովուրդի գաղութի վարժարանի և հայ գաղութի մասին, ինչպէս նաեւ Պատրիարքարանի մէջ վարչական, հանրային յարաբերութեանց և բարոյական անձնակազմի հարցերուն մասին: Խօսքը մասնաւորեց Բեթղեհէմի ներկայ կացութեան շուրջ, անդրադառնալով և յատկացնելով իրական պատկերը Բեթղեհէմի Հայոց Վանքին ու ծառայող վանականներուն: «Թեմ, փառք Աստուծոյ, շատ մեծ վնասներ չեն եղած, սակայն Վանքի կայունացումը վերանորոգութեան հարցը այժմէական է և ծախսալից: Սփիւռհաշարած օգնութիւնը անհրաժեշտ է»:

Բացատրութեան ընթացքին, հոգեւորականները իրենց մտաւորութիւնները յայտնեցին և հարցումներ ուղղեցին զանազան նիւթերու շուրջ: Պատրիարք Սրբազան Հայրը տուաւ անհրաժեշտ և գոհացուցիչ պատասխաններ: Ձերմ մթնոլորտի մէջ կայացած հանդիպումը վերջ գտաւ յետ միջօրէի ժամը 4-ին՝ Պատրիարք Սրբազան Հօր աղօթքով և օրհնութեամբ:

- Ս. ՅԱԿՈԲԵԱՆՑ ՄԻԱՔԱՆՆԵՐՈՒ ՀԵՏ

Նոյն երեկոյեան, Պատրիարք Սրբազան Հայրը ընթրիք-հանդիպում ունեցաւ Ամերիկայի Արեւելեան Թեմին մէջ ծառայող երուսաղէմի միաբանութեան անդամներուն հետ: Հանդիպմանը ներկայ էին Տ. Խաժակ Արք. Պարսամբան, Տ. Գեղամ Մ. Վրդ. Զաքարեան, Տ. Գրիգոր Մ. Վրդ. Բարգէն Մ. Վրդ. Անուշեան, Տ. Վազգէն Մ. Վրդ. Գարայեան, Տ. Գրիգոր Մ. Վրդ. Մագաւուտեան և Տ. Իսահակ Արք. Մինասեան: Քննարկուեցան Միաբանութիւնը և Վանքի յուզող հարցեր և խնդիրներ:

- ԱՐԵՒԵԼԵԱՆ ՈՒՂՂԱՍՈՒ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Հինգշաբթի, 16 Մայիս, Ամերիկայի մէջ Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիներու ներկայացուցիչներու գարնանային համագումարը կայացաւ Նիւ Ճըրքի Սիտըր Կրովի Ղաթի եկեղեցւոյ կեդրոնին մէջ:

Քոյր եկեղեցիներու պետերու հրաւերով, եկեղեցականներէ բաղկացած հանդիպումին իր մասնակցութիւնը բերաւ Պատրիարք Սրբազան Հայրը: Ներկայ էին Թեմակալ Առաջնորդ Տ. Խաթակ Արք. Պարսամեանը, Վահան Մ. Վրդ. Յովհաննիսեան, Ղաթոց Դաւիթ Արքեպիսկոպոսը, Ասորւոց Մար Կիրեղ Եփրեմ Բարիւմ Արքեպիսկոպոսը, իսկ Նքովպիացւոց եւ Մալապար եկեղեցիները կը ներկայացնէր վարդապետ մը: Ծրագրումներ եղան կատարուած ընթացիկ աշխատանքներու կարեւորութեան եւ համագործակցութեան մասին:

Ներկաներու խնդրանքով, Պատրիարք Սրբազան Հայրը մանրամասնօրէն անդրադարձաւ Ս. Երկրին մէջ տիրող բաղադրական անբարենպաստ կացութեանը: Հանդիպման աւարտին տեղի ունեցաւ սիրոյ-նաշ:

- ՈԱԲԲԻ ՇՆԱՅՐԻՆ ՀԵՏ

Ուրբաթ, 17 Մայիս, Առաջնորդ Խաթակ Սրբազանին հետ Պատրիարք Սրբազան ընթրիքի հիւրն էր Նիւ Եորքի Ռաբբի Աբրըր Շնայըրի բնակարանին մէջ, որուն հետ երկար տարիններ գործակցած է եւ կը շարունակէ, իրրեւ անդամ Ափփիլ ով Քօնշընս Հիմնարկին:

- ԵՐՈՒՍԱՂԵՍԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐՈՒ ՅԱՆՉՆԱՆՈՒՄԲԻՆ ՀԵՏ

Երկուշաբթի, 20 Մայիս, նաշ-հանդիպում տեղի ունեցաւ Պատրիարք Սրբազան Հօր եւ «Երուսաղէմի Պատրիարքութեան Բարեկամներ» Յանձնախումբի անդամներուն հետ Առաջնորդարանին մէջ: Հանդիպմանը ներկայ էին ատենապետ Ալէքս Տատուրեան, Մայքլ Յարութիւնեան, Միսաք Հայկեան, Գեղամ Զօլաքեան, Գրիգոր Մանուէլեան, Արփի Ասլանեան: Նոյնպէս հանդիպում տեղի ունեցաւ 7 Յունիսին, խորհրդակցութեան նիստ ունենալով ծրագրումը միջոցներու, Երուսաղէմի Պատրիարքարանին գործունէութեանց կարգաւորման տեսակէտով:

- ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ ՀԵՏ

Երեքշաբթի, 21 Մայիս, Պատրիարք Սրբազան Հօր եւ Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան Թեմի Խորհուրդին հետ տեղի ունեցած հանդիպմանը շօշափուեցան շարք մը հարցեր Թեմին եւ Պատրիարքարանին յարաբերութիւնները աւելի զօրացնելու ուղղութեամբ: Խորհրդակցութեան կը մասնակցէին Տ. Խաթակ Արք. Պարսամեան, Հայկ Տատուրեան (Ատենապետ), Ճան Ամպոյեան, Լիլիըն Զափեան, Տ. Մարտիրոս Քինյ. Զեւեան, Օսկար Թաթոսեան, Ճան Սիմոնեան, Ճէյմս Գալստեան, Տ. Եփրեմ Քինյ. Քէլէկեան, Տ. Առաքել Քինյ. Ալնալեան: Բացակայ էին Սարգիս Պետկեան եւ Տ. Յարութիւն Քինյ. Տըկլի:

- ՄԱԿ-Ի ՄՕՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆԻՆ ՀԵՏ

Չորեքշաբթի, 22 Մայիս, առաւօտեան ժամը 10-ին, Պատրիարք Սրբազան Հայրը պաշտօնական հանդիպում ունեցաւ Միացեալ Ազգերու Կազմակերպութեան մօտ Հայաստանի Հանրապետութեան մնայուն եւ լիազօր Դեսպան Տոքթ. Մովսէս Աբելեանի հետ:

Հանդիպմանը ներկայ էին Թեմակալ Առաջնորդ Տ. Խաթակ Արք. Պարսամեան եւ դեսպանատան անձնակազմէն Տիար Արման Յակոբեան, որ մասնագէտ է Միջին Արեւելի յարաբերութիւններու:

Խօսակցութեան ընթացքին, Պատրիարք Սրբազան Հայրը բարի երբ մաղթեց Սփիւռք-Հայաստան համագումարին մեկնող Դեսպանին, իր կողմէ ալ ցաւով նշեց որ պիտի չկարենայ մասնակցիլ:

- ԿԱԹՈՒԼԻԿ, ՅՈՅՆ ԵՒ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՊԵՏԵՐՈՒՆ ՀԵՏ

Հինգշաբթի, 6 Յունիս, կէսօրէ ետք ժամը 3-ին Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Թեմակալ Առաջնորդ Տ. Խաթակ Արք. Պարսամեանի, Տ. Վիգէն Նպս. Այֆազեանի եւ գաւազանակիր Տ. Իսահակ Արք. Միմասեանի տեսակցութիւն ունեցաւ Կաթոլիկ Եկեղեցւոյ Նիւ Եորքի Առաջնորդ եւ իրն քարեկամ Կարտինալ Էտուրըտ Իլընին հետ: Կաթոլիկ Եկեղեցւոյ գրասենեակին մէջ տեղի ունեցած հանդիպման ատեն, բնակարանեցան երկու եկեղեցիները յուզող հարցեր:

Կէսօրէ ետք ժամը 5-ին, Պատրիարք Սրբազանը հանդիպում ունեցաւ Ամերիկայի Յոյն Եկեղեցւոյ Առաջնորդ Արքեպիսկոպոս Տիմիթրիոսին հետ, Առաջնորդարանին դահլիճին մէջ:

Իսկ երեկոյեան ժամը 7-ին, Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Առաջնորդ Սրբազանին, Վիգէն Նպս. Այֆազեանի եւ գաւազանակիր Հայր Սուրբի, հիւրընկալուեցաւ Նպիսկոպոսական Եկեղեցւոյ Առաջնորդ Կրիմ Կրիգուրլոս Նպիսկոպոսի ապարանքը, ուր Տ.

Արտեն Ա. Քինյ. Աշենանի, Երեցկին Մարիամի եւ ուրիշ հրաւիրեալներու հետ տեղի ունեցած ընթրիքին անգամ մը եւս հաստատուեցաւ երկու եկեղեցիներու փոխադարձ աջակցութեան եւ հասկացողութեան առկայութիւնը:

- ԳՐԻԳՈՐ ՈՍԿԱՆԵԱՆԻՆ ՀԵՏ

Զորեմբաքքի, 22 Մայիս, Առաջնորդարանի դահլիճին մէջ, Պատրիարք Սրբազանը տեսակցութիւն ունեցաւ Ժառանգաւորաց վարժարանէն սկսեալ դասընկեր Գրիգոր Ոսկանեանին հետ, որ ծանր հիւանդ էր: Երեք օրեր յետոյ Ոսկանեան իր մահկանացուն կնքեց:

Նոյն շրջանին, Պատրիարք Սրբազան այցելեց Լոնկ Այլընտի հիւանդանոց փոխադրուած Տ. Բարթող Ա. Քինյ. Գրիգորեանին, որ բազում տարիներու Հոգեւոր Հովիւն էր Մօնթրէալի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ: Տ. Բարթող Քահանան նոյնպէս օրեր յետոյ ի Տէր հանգեաւ: Պատրիարք Սրբազան առիթ ունեցաւ տեսակցելու Գանատայի Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտերեանի հետ Նիւ Եորքի Առաջնորդարանին մէջ:

- ՄՏԵՐՍԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

Երեմբաքքիէն Հինգշաբթի օրերուն, 21-23 Մայիս, Պատրիարք Սրբազան մտերմական հանդիպումներ ունեցաւ Ժառանգաւորաց վարժարանի 1940-ական թուականներէն մտերիմ անձերու հետ: Առնակ Ա. Քինյ. Գասպարեանի եւ Երեցկին Մանուշակի յարկին ներքեւ, Ֆրեզնօէն՝ Շահէ Ա. Քինյ. եւ Երեցկին Մէրի Ալթունեան, Նիւ Եորքէն՝ հանգուցեալ վարդապետ Ա. Քինյ.-ի Երեցկին Եւգին Մկրեան, Լոս Անճելոսէն՝ Հայկ Գրիգորեան եւ Սուրեն Մանուկեան (Սրբազանին եղբայրը), Տէյթըն Օհայօէն՝ Յակոբ եւ Մէրի Ներսոյեան, եւ Նուպար Տօրեան, ձօյս Սուլահեան:

ՀԻՐ ԳԵՈՐԳ ԵՒ ՍԻՐՎԱՐԴ ՅՈՎՆԱՆԵԱՆՆԵՐՈՒ ՄՕՏ

Տէր եւ Տիկին Գեորգ եւ Սիրվարդ Յովնանեան հիւրընկալեցին Պատրիարք Սրբազանը Նիւ Եորքի իրենց յարկաբաժնին մէջ, ԴՇ. 15 Մայիսին, ընթրիքին սեղանակից ունենալով Առաջնորդ Խաժակ Սրբազան, Վիգէն Եպս. Այգազեանը, Տէր. եւ Տիկին Միքեանը (Նիւ Ճըրզիէն), Պր. Հայկ Տիտիգեանը (Լոնտոնէն) եւ գաւազանակիր Իսահակ Արք. Մինասեանը:

Իսկ Մայիս 25-27, Պատրիարք Սրբազան Հայրը հիւրը եղաւ Տէր եւ Տիկին Գեորգ եւ Սիրվարդ Յովնանեանի Նիւ Ճըրզի իրենց բնակարանին մէջ, ուր հանդիպումներ ունեցաւ ընտանիքի անդամներէն Արա Յովնանեանի, եւ դստեր եւ փեսային՝ Ռոզ եւ Դաւիթ Նաճառեանի երիտասարդ գաւակներուն հետ: Նաեւ Տէր. եւ Տիկին Էտկար եւ Մարիոն Յովսէփեանի հետ:

Կիրակի առաւօտ, 26 Մայիսին, Պատրիարք Սրբազանը Ս. Պատարագին մասնակցեցաւ, Տէր եւ Տիկին Գեորգ Յովնանեանի նուիրատուութեամբ կառուցուած էկլընի Ս. Ստեփաննոս եկեղեցին: Գնահատեց Հոգեւոր Հովիւ Մամիկոն Վրդ. Քիլենեանի եւ համայնքին ծրագրան գործունէութիւնը, խօսեցաւ Երուսաղէմի ներկայ կացութեան մասին, մասնակցեցաւ սրահին մէջ տրուած հիւրասիրութեան, եւ այցելեց Հանգստեան Տան բնակիչ հայ տարեցներուն:

ԲԺՇԿԱԿԱՆ ԵՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔՆՆՈՒԹԻՆՆԵՐ

Պատրիարք Սրբազանի բժշկական ընդհանուր բնութիւնները կատարելու համար, Նիւ Եորքի Գոյումպիա Փրէպիթէրիըն Բժշկական Կեդրոնի երկարամեայ հայ մասնագէտ բժիշկ Էտկար Յովսէփեանի կարգադրութեամբ, Պատրիարք Սրբազանը վեց մասնագէտներու հետ ժամադրութիւններ ունեցաւ Մայիս 13 - Յունիս 6 շաբաթներուն: Ընդհանուր առողջական վիճակը գոհացուցիչ է, ձախ աչքի «գաթարագթ» գործողութիւնը յաջող կատարուեցաւ, իսկ ծունկներու գործողութեան պարագան յետաձգուեցաւ, հոգատարութեան որոշ թելադրութիւններով:

Ժամադրութիւններու իրականացման եւ յաջող ընթացքին համար յատուկ շնորհակալութիւններ Տէր. Էտկար Յովսէփեանին եւ Միաբանութեան անդամներէն Տ. Բարդէն Ծ. Վրդ. Անուշեանին, այդ շրջանին պատրաստակամօրէն Պատրիարք Սրբազան Հօր կողմէն ըլլալուն համար:

ՀՈԳԵՅԱՆԳՍԵԱՆ ՊԱՇՏՕՆ ԳԱՐԵԳԻՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՎԱՆՃԱՆՄԱՆ ՅՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ ԱՌԹԻ

Կիրակի, 9 Յունիս, Ս. Վարդան Մայր Տաճարին մէջ, յաւարտ հանդիսաւոր Ս. Պատարագի տեղի ունեցաւ Հոգեհանգստեան Պաշտօն՝ երջանկայիշատակ Տ. Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի վախճանման երրորդ տարելիցին առիթով:

Օրուան պատարագիչն էր Թեմի Առաջնորդ Ս. Խաթակ Արք. Պարսամբան: Հոգեհանգրստեան արարողութեանը նախագահեց Թորգոմ Պատրիարք Սրբազան Հայրը:

Յընթացս Ս. Պատարագի Առաջնորդ Սրբազան Հայրը նախ քարի գալուստ մաղթեց ներկայ բարձրաստիճան եկեղեցականներուն և հիւրերուն՝ Լոնտոնէն Ս. Նիկիէ Արք. Կիզիրեանին, Արեւմտեան Երոպայի Հայրապետական Պատուիրակ և Փարիզի Հայոց Առաջնորդ Ս. Գիւտ Արք. Նազգաշեանին, Պրոֆիլինի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ հովիւ Ս. Ամանիա Արք. Արապանեանին, Թեմական Պատուիրակ և Առաջնորդ Ս. Վիգէն Եպս. Այվազեանին, Անգլիոյ Հայրապետական Պատուիրակ և Առաջնորդ Ս. Նաթան Եպս. Յովհաննիսեանին, ՄԱԿ-ի մօտ ՀՀ մնայուն և լիազօր Դեսպան Տոֆ. Մովսէս Արելեանին և ՀՀ նախկին Վարչապետ և Անգլիոյ Դեսպան Տիար Արմէն Սարգիսեանին:

Ապա, Ս. Պատարագի «Քրիստոս ի մէջ մեր» երգէն «Եկեղեցիս մի անձն եղև» պատշաճ մէջբերումը բնաբան ունենալով, զարգացուց այդ միտքը ըսելով՝ «Երջանկայիշատակ Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ջանքերն էին եկեղեցին մէկ անձի վերածել, և այսօր Անոր յիշատակն է որ մեզ մէկ անձի կը վերածէ»: Իր պատգամէն ետք, հրաւիրեց Պատրիարք Սրբազան Հայրը, որպէս զի օրուան քարոզը տայ:

«Այսօր հաւաքուած ենք յիշատակովը հանգուցեալ Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի վախճանման երրորդ տարեկիցին: Այդ տարեկիցին կապուած է ուրիշ իրողութիւն մը, որուն նպատակն է մեր մէջէն, մեզի պէս պարզ հոգիներէն ի յայտ բերել անձեր, որոնք պիտի կարենան շարունակել Վեհափառ Հայրապետին գործը, և կամ իրենք իրենց պարտք պիտի համարեն մէկտեղել Վեհափառ Հայրապետի բոլոր գրական ժառանգը և ներկայացնել հանրութեան, որպէս զի անոր մէջէն մենք աւելի ճանչնանք Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Այդ իմաստով գնահատելի է նուիրատուութիւնը Հայկ և Էլզա Տիտիգեաններուն, որոնց մեկենասութեամբ է որ լոյս պիտի տեսնեն այս հրատարակութիւնները»: Այնուհետեւ, Պատրիարք Սրբազան Հայրը մէկ առ մէկ յիշեց Վեհափառ Հայրապետին անձին մէջ կայացած դաստիարակն ու ճարտասանը, աստուածաբանն ու քարոզիչը, միջեկեղեցական տիրապետող դէմքն ու տիպարը, և շարունակեց. «Հայ եկեղեցին Աստուծոյ ծառան է, Հայ եկեղեցին Քրիստոսի հաւատքը ստացաւ Խոր Վիրապէն, Քրիստոսի անձէն, և մեր ունեցած ժառանգութիւնը յաւիտեանական է: Պատմութեան մէջ ինչ չարիքներ որ կան, եթէ հասնին մեր ժողովուրդին՝ այդ չարիքները պիտի չխորտակեն մեր հաւատքը: Այսպէս հաւատաց Գարեգին Կաթողիկոս և ամէն ջանք ի գործ դրաւ որպէս զի այդ հաւատքը ապրի մեր ժողովուրդին մէջ ու ապրեցնէ մեր ժողովուրդը»:

Ս. Պատարագի աւարտին, Եպիսկոպոսաց դասը քարձրացաւ Աւագ Խորան և տեղի ունեցաւ մասնաւոր Հոգեհանգստեան Պաշտօն՝ հանդիսապետութեամբ Պատրիարք Սրբազան Հօր: Երգեցողութիւնը կատարեց Մայր Տաճարի դպրաց դասը՝ ղեկավարութեամբ Խորէն Մէլիքանեանին:

ՀՈԳԵՃԱՇ ԳԱՐԵԳԻՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՎԱՆՃԱՆՄԱՆ 3^Դ ՏԱՐԵԼԻՑԻՆ ԱՌԹԻ

Եկեղեցական արարողութեանը անմիջապէս յաջորդեց, Լոնտոնաբնակ և բարեբար Տէր և Տիկին Հայկ և Էլզա Տիտիգեաններու հիւրընկալութեամբ, Առաջնորդարանի Հայկ և Ալիս Գալուփեան ճոխ հանդիսասրահին մէջ սպասարկուած հոգեհաշը: Հոգեհաշին ներկայ գտնուեցան աւելի քան 400 հրաւիրեալներ:

Օրուան հանդիսավար Տոֆ. Բաֆֆի Յովհաննիսեան, գնահատական խօսքերով Թեմակալ Առաջնորդ Ս. Խաթակ Արք. Պարսամբանին շնորհաւորեց որպէս Առաջնորդ վերընտրութեան և Նիւ Ճըրզիի Սիթըն Հոլ Համալսարանէն Պատույ Տոֆթորայի աստիճան ստանալու առիթներով:

Քարի գալուստի ուղերձով հանդէս եկաւ Տիար Հայկ Տիտիգեան, նաեւ յայտնեց որ ձեռնարկուած է Գարեգին Կաթողիկոսի անտիպ և սպառած գործերը հրատարակելու աշխատանքին, որուն առաջին հատորը այսօր պիտի նուիրուի ներկաներուն:

Վախճանեալ Հայրապետի հարազատներուն անունով, Տիար Յակոբ Սարգիսեան շնորհակալութիւն յայտնեց հիւրընկալ բարեբար զոյգերուն, որոնք նախաձեռնած են Հայրապետի ամբողջական գործերու հրատարակութեան՝ անգամ մը եւս անմահացնելով Անոր յիշատակը:

Հանդիսավար Բաֆֆի Յովհաննիսեան առանձին առանձին ներկայացուց բարձրաստիճան եկեղեցականները, ինչպէս նաեւ Երոպայէն, Միջին Արեւելքէն, Գաւառայէն և Ամերիկայի գնահատելի շրջաններէն եկած հիւրերը:

Օրուան գլխաւոր խօսողն էր Տիար Մայքլ Յարութիւնեան, որ երկար տարիներու բարեկամն էր վախճանեալ Հայրապետին: Ան տուաւ ամփոփ կենսագրականը Գարեգին Կաթողիկոսի և անդրադարձաւ Անոր վայելած ազգային և միջազգային վարկին ու յարգանքին:

Ներկաներուն բաժնուեցան “Karekin I: In His own Words” գիրքի օրինակները: Գեղատիպ եւ նկարագարող գիրքը, որ նախաձեռնուած մատենաշարի մը առաջին հատորն է, կը ներկայացնէ Գարեգին Ա. Հայրապետի անտիպ գրութիւններէն փունջ մը:

Գիրքին խմբագիր Տիկին Այրիս Փափագեան շնորհակալութիւն յայտնեց գիրքի բարերարներուն եւ իր գործակից Տոքթ. Վազգէն Դուկասեանին:

Դեսպան Տոքթ. Մովսէս Արեւեանի սրտի խօսքն է, թե՛ հրաւիրուեցաւ Առաջնորդ Սրբազան՝ Տ. Նաթակ Արք. Պարսամեան: Բարի գալուստ մաղթեց բոլոր եկեղեցական եւ աշխարհական հրաւիրեալներուն, ինչպէս նաեւ Հայ ժողովուրդի բարեկամ Փրոֆ. Կանոնիկոս Ռօպերթ Բայթի, որ գլխաւոր խօսողն էր վախճանեալ Հայրապետի Ա. տարելիցի հոգեհաշին: Իր գոհունակութիւնը յայտնեց Տիտիգեան ամուլին, որ միշտ Վեհափառ Հայրապետին հետ եղաւ, մինչեւ իր կեանքի վերջին օրերը, եւ այսպիսի ոգեկոչման հանդիսութիւններով միշտ վառ կը պահեն հանգուցեալ Կաթողիկոսի յիշատակը: Ան իր երախտագիտութիւնը յայտնեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Գարեգին Բ.ի, որ այս ոգեկոչման առթիւ Մայր Աթոռէն ղրկած է իր Հայրապետական օրհնութիւնն ու խօսքը, զոր կարգաց Տ. Նդիշէ Արք. Կիզիլբասը:

Նորին Սրբութիւնը իր նամակին մէջ կ'ըսէր. «... Արդարեւ, մեր ժողովուրդի յարատեւութեան մեծ հաւատաւորն էր լուսահոգի մեր նախորդը՝ Գարեգին Ա. Հայրապետը: ... Այո՛, մահը եկաւ, բայց յաղթուեց հոգեւոյս Հայրապետի ապրած կեանքի եւ գործի առջեւ»:

Փակման խօսքը կատարեց Պատրիարք Սրբազան Հայրը: Իր խօսքին մէջ թելադրեց. «Ներկաներէն ամէն մէկը վախճանեալ Հայրապետին հետ անձնական հանդիպումներէն շատ յիշատակներ ունի: Լաւ պիտի ըլլայ եթէ այդ յիշատակները հաւաքուին եւ որպէս մատենաշարի վերջին հատոր հրատարակուին»: Ապա, անդրադարձաւ Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանի ներկայ կացութեան եւ տուաւ անհրաժեշտ բացատրութիւններ անոր ունեցած դժուարութիւններու եւ կարիքներու մասին:

Պատրիարք Սրբազան Հօր օրհնութեամբ եւ «Տէրունական Աղօթք»ի երգեցողութեամբ աւարտին հասաւ տպաւորիչ հանդիսութիւնը, որով ներկաները «մի անձն» եղած իրենց յարգանքի տուրքը մատուցին Հայ Եկեղեցւոյ 131-րդ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա. Հայրապետին:

ՆԻՒ ԵՈՐՔԵՆ ԴԵՊՈՒ ԴԵՊՈՒ ՖԻԼՍՏԵԼՅԱՆ, ՈՒԱՇԽԿԱԾԸՆ ԵՒ ԴԱՐԻՍՊՈԼԿ

Յունիս ամսոյ սկիզբէն Պատրիարք Սրբազան Հայրը կատարեց իր այցելութիւնները՝ Ֆիլատեփիա - Ուաշինկթըն Տի. Սի. - Հարիսպըրկ - Նիւ Եորք: Երթեւեկութեան ընթացքին Պատրիարքարանի բարեկամ ձօն Վարդան սիրով տրամադրեց իր ճանապարհորդական հանրակառքը:

- ԴԵՊՈՒ ՖԻԼՍՏԵԼՅԱՆ

Մարաթ, 1 Յունիս դէպի Ֆիլատեփիա մեզի ուղեւորող Տէր եւ Տիկին ձորն եւ Ծովիկ (Պատրիարք Սրբազանի բոլոր) Տովաթեաններու առաջարկով, ճանապարհին պահ մը կանգ առանք այս Թեմին մէջ Պատրիարք Սրբազան Հօր հովուական ծառայութեան առաջին ծովի, այժմ Զէյթընհամի Ս. Երրորդութիւն եկեղեցին, ուր տարեց սարկաւազ մը վերջերս նորոգուած եկեղեցւոյ բացատրութիւնները տուաւ:

Երեկոյացած էր, երբ ծառայեց Ռիմփուտի Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ եկեղեցին: Նախ «Հրաշափառ»ի արարողութեամբ, իսկ այնուհետեւ եկեղեցւոյ կից սրահին մէջ ծխական մասնակցութեամբ հիւրընկալուեցաւ Պատրիարք Սրբազան Հայրը:

Հրաւիրեալ օտար եկեղեցիներու հոգեւորականները մասնակցեցան արարողութեան, ուր Պատրիարք Սրբազան Հայրն Անգլիկներով իր պատգամին մէջ դիմեց հանրութեանը, աւելի մօտէն հետաքրքրուելու Ս. Տեղեաց ապահով կացութեամբ:

Կիրակի օրուան Ս. Պատարագը Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ եկեղեցւոյ մէջ մատուցեց նոր հո-վի նշանակուած Հայկազուն Ծ. Վրդ. Նաճարեան: Ներկայ էին Պատրիարք Սրբազան Հայրը, Վի. Նդիշէ Արք. Կիզիլբասը, Տ. Վիգէն Նպս. Այֆագեան, Տ. Սասուն Ծ. Վրդ. Զմրուխտեան, Տ. Իսահակ Արք. Միմասեան եւ զոյգ համայնքներու հաւատացեալ ժողովուրդը:

Բարեգալստեան ճաշկերոյթ տեղի ունեցաւ եկեղեցւոյ զարդարուած հանդիսասրահին մէջ, ի պատիւ նոր նշանակուած հովիւ Հայկազուն Ծ. Վրդ. Նաճարեանի: Ծնորհանդէսի առնելէ պատիւ նոր նշանակուած հովիւ Հայկազուն Ծ. Վրդ. Նաճարեանը, երբ անձնական արտայայտուողներու խօսքը համառօտեց Պատրիարք Սրբազան Հայրը, երբ անձնական փորձառութենէն ելնելով ներկայացուց Հայր Սուրբի բարեմասնութիւններն ու աստուածա-շնորհ արժանիքները:

Երկուշաբթի երեկոյին, Տէր Եւ Տիկին Պօղոս Եւ Շաֆէ Տէրտէրեաններու ընտանեկան յարկին տակ, Ֆիլատելֆիոյ շրջանի ծուխերու Եւ կազմակերպութիւններու վարչական մարմնի անդամներէն 25-30 հոգի՝ ազգային հարցերով մտահոգ խորհրդակցութիւն ունեցան Պատրիարք Սրբազան Հօր հետ: Կազմուեցաւ իննը ներկայացուցիչներ բաղկացած «Բեքդեշէմի Աստղեր» անունով յանձնախումբ մը, որի հիմնական նպատակ պիտի ըլլայ նեցուկ կանգնել Հայոց Վանքին:

Եւ հիւրընկալուեցայ նաեւ Տէր Եւ Տիկին Բարգէն Եւ Անահիտ Մկրեաններու տանը:

- ԴԵՊԻ ՈՒՍԸԻՆԿԹԸՆ, ՏԻ. ՍԻ.

Երեքշաբթի, 4 Յունիս, առաւօտեան Պատրիարք Սրբազանը Ֆիլատելֆիայէն ուղեւորուեցաւ դէպի Մայրաքաղաք՝ Ուաշինկթըն, ՏԻ. ՍԻ.:

Պատրիարք Սրբազան Հայրը ընկերակցութեամբ Տ. Վիգէն Եպս. Այվազեանի Եւ գաւազանակրին այցելեց վերջերս Հայկական Համագումարի ջանքերով գնուած «Հայկական Ցեղասպանութեան Թանգարան Եւ Յուշարձան»ը: Այդ հաստատութեան ընդհանուր վարիչ Բօս Վարդեան առաջնորդեց հիւրերը շէնքին տարբեր բաժանմունքները, տալով բացատրական Եւ նկարագրական պատկերը ապագային վերգոյացող իւրայատուկ քանգարանին:

Ճաշի առեւ Համագումարի Վարչութեան անդամները իրենց մտահոգութիւնը յայտնեցին Հայոց Պատրիարքարանի ներկայ կացութեան վերաբերեալ: Այնուհետեւ, հիւրերը տարուեցան Հայկական Համագումարի Կեդրոն: Եւ այցելեցին իւրաքանչիւր բաժանմունք:

Պատրիարք Սրբազան Հայրը հանդիպում ունեցաւ Հայկական Ազգային Ինստիտուտի (ԱՆԻ) Եղեռնի հարցերու գրասենեակի տնօրինութեան հետ՝ յանձնա Տէր. Ռուբէն Աղալեանի Եւ Յակոբ Թումայեանի: Առաջարկութիւն եղաւ որ ապագային ուսումնասիրութեան միւս դառնայ Եղեռնի հետ կապուած Երուսաղէմեան նամականին, որ կարիք ունի մասնագէտներու ուսումնասիրութեան:

Նոյն օրը կէսօրէ ետք, Պատրիարք Սրբազան Հայրը հանդիպում ունեցաւ ԱՄՆ-ի Կոնգրեսի Ներկայացուցիչներու Տան անդամ Ֆրէնք Փոլոնին հետ Կառավարական շէնքի իր գրասենեակին մէջ: Հայկական խնդիրներուն ծանօթ երեսփոխանը սիրալիրութիւն ցուցաբերեց օգտակար ըլլալու վերջին տարիներուն Ս. Երկրի մէջ ծաւալուող խնդիրներուն:

Երեկոյին Ուաշինկթըն ՏԻ. ՍԻ. քաղաքի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ «Հրաշափառ»ի արարողութիւն: Ներկայ էին հիւրեր Հայաստանի մէջ Ամերիկայի նախկին Դեսպան Մայքլ Լեմման Եւ ՀՀ Դեսպանատան պաշտօնեաներն իրենց տիկիններուն հետ: Հոգեւոր հովիւ Տ. Վրթանէս Ա. Քիւնյ. Գալայեան հրաւիրեց մասնակցելու ընթրիք-հիւրասիրութեան եկեղեցւոյ սրահին մէջ: Զանգակ երաժշտական գործիքներով հայ մանուկներու նուագախումբը փայլուն հանդէս եկաւ՝ ղեկավարութեամբ Տիար Լեւոն Խօջա-Էլնաթեանի:

Ուշ ժամին, ՀՀ դեսպանատան բարձրաստիճան պաշտօնեաներու հիւրընկալութեամբ եղանք մայրաքաղաքի Հայկական դեսպանատանը, ուր Պատրիարք Սրբազան Հայրը իր գոհունակութիւնը արձանագրեց այցելուներու տեսրակի մէջ: ՀՀ Դեսպան Տիար Արման Կիրակոսեան (որ քաղաքէն կը բացակայէր) հեռաձայնով խօսակցութեան առեւ, իր ուրախութիւնը կիսեց Պատրիարք Սրբազան Հօր այցին առիթով: Հիւրասիրութենէն յետոյ տանտէրերը շրջապատյոյ մը կազմակերպեցին շէնքի տարբեր մասերուն մէջ:

- ՀԻՒՐԸՆԿԱԼՈՒԹԻՒՆ ՀԱՐԻՍՊՈՐԿԻՆ ՄԵՋ

Չորեքշաբթի, 5 Յունիս - Անակնկալներով էր լեցուն Պատրիարք Սրբազան Հօր առաջին այցելութիւնը Փենսիլվէնիա նահանգի մայրաքաղաքը՝ Հարիսպըրկ, ուր հիւրընկալուեցանք նահանգի հայ գործարար Եւ Հայոց Պատրիարքարանի քարեկամ՝ Ճօն Վարդանի ընտանեկան յարկէն ներս: Տեղի ունեցաւ խորհրդակցական ժողով Պատրիարք Սրբազան Հօր, Վիգէն Եպս. Այվազեանի Եւ Երուսաղէմի Կալուածական Մատակարարման Մարմնի երեք գլխաւոր անդամներու՝ Ճօն Վարդանի (Ատենապետ), Դաւիթ Նանարեանի (գանձապահ) Եւ Սեպուհ Պոյաճեանի (Ատենադպիր) հետ: Քննարկուեցան վերջին տարիներուն յառաջացած շարք մը կալուածական Եւ տնտեսական հարցեր, որմէ ետք նաշանեղանի շուրջ ներկայ էին նաեւ վերջիններու տիկինները:

Տեղական հեռուստատեսային լրատուական կայաններէն մէկուն քացառութեամբ տրուած հարցազրոյցէն ետք, Պատրիարք Սրբազանը տեսակցութիւն ունեցաւ Նահանգային Ոստիկանապետ Փօլ Իվանգոյին հետ: Ոստիկանապետը լսելով Պատրիարք Սրբազան Հօր կատարած երկար Եւ յոգնեցուցիչ ճանապարհորդութիւններու մասին, իր կողմէ սիրայօժար կերպով առաջարկեց յաջորդ անգամին տրամադրել աւելի արագ փոխադրամիջոց՝ ուղղաթիւ:

Նոյն երկրոյեան, ձօն վարդանի հովանաւորութեամբ եւ վերջերս իր շնորհիւ կառուցուած «Բարեւ» նաշարանին մէջ, ի պատիւ Պատրիարք Սրբազան Հօր կայացած ընթրիք-երկոյթին հրաւիրուած էր նահանգի աւագանին, պետական եւ գործարար անձինք, բժիշկներ եւ փաստաբաններ, հին ու նոր բարեկամներ:

Երկու ժամէ աւելի տեւող հանդիսութեան ընթացքին, ամերիկեան բարձր հասարակութեան կողմէ ներկայացուած եւ պարգեւատրուած տասնեակ պատուագրերը անգամ մը եւս հաստատեցին Պատրիարք Սրբազան Հօր նուիրումութիւնը դէպի Ամերիկան եւ անոր հայութեանը, հաւատարմութիւնը՝ Հայաստանեայց Եկեղեցիին եւ անոր ժողովուրդը: Յուզիչ էր պահը եւ անսպասելի կատարուածը. միայն շնորհակալութիւն կարելի էր յայտնել կազմակերպիչներուն, խօսողներուն եւ ներկաներուն:

Գիշերուան ժամը 10ին հրաժեշտ առնելով եւ շնորհակալութիւն յայտնելով Տէր եւ Տիկին ձօն եւ Մարալ վարդանին, իրենց հիւրընկալութեան համար, իրենց անճնական ինքնաշարժով եւ քաղաքապետին նշանակած զինուորականի ընկերակցութեամբ Նիւ Եորք հասանք, առաւօտեան ժամը 2ին:

ՈՂՋԵՐԹ ԵՒ ԲԱՐԵՅԱԶՈՂ ՎԵՐԱԴԱՐՁ ՄԱՅՐԱՎԱՆՔ

Երկուշաբթի, 10 Յունիս, Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ գաւազանակիր Տ. Իսահակ Արդ. Մինասեանի, Նիւ Եորքէն Երուսաղէմ վերադարձաւ կէս գիշերուան ժամը 12-ին՝ Էլ Ալ օդանաւային ընկերութեամբ:

ձօն էֆ Գեներալի օդանաւային ողջերթի եկած էին թեմակալ Առաջնորդ Տ. Խաժակ Արք. Պարսամեան, Տ. Անանիա Արք. Արապանեան, Տ. Վազգէն Ծ. Վրդ. Գարայեան, Բաբգէն Ծ. Վրդ. Անուշեան, Տիար Գեղամ Զօլաքեան, Տիար Զարլըզ եւ Գրիգոր Մանուէլեաններ: Մասնաւոր արտօնութեամբ Առաջնորդ Սրբազանը Պատրիարք Հօր ընկերակցեցաւ մինչեւ օդանաւի մուտքը:

Նոյն օրը, Երեքշաբթի 11 Յունիս, կէսօրէ ետք ժամը 5-ին բարեյաջող վերադարձանք Մայրավանք, Երուսաղէմ:

Հոս վերջացնելով նկարագրականը ակնթարթի մը պէս անցնող նախապրիորդութեան, մասնաւոր շնորհակալութիւններ պէտք է յայտնել Արեւելեան Թեմի Առաջնորդ Սրբազանին եւ անոր աջակից հոգեւորանաց դասին, Վիգէն եւ Անանիա Սրբազաններուն, Առաջնորդարանի պաշտօնէութեան, թեմական եւ ծխական խորհուրդներուն, յայտնի ու անյայտ, հայ կամ օտար անհատներուն եւ կազմակերպութիւններուն: Շնորհակալութիւն անոնց, որոնք սատարեցին Պատրիարք Սրբազան Հօր բարեյաջող բժշկական ֆննութեանց եւ հետաքրքիր ժամանցին, Միացեալ Նահանգներու Արեւելեան Թեմէն ներս:

ԻՍԱՀԱԿ ԱՐԴ. ՄԻՆԱՍԵԱՆ